ԼԻԼԻԹ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ «ՀՈԳՍԵՐՆ» ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Անդրադարձը այսօրվա նորաստեղծ գրականությանը նպատակային է, որ ենթադրում է նաև կարծիքների փոխանակում, փնտրտուք պատասխանի շուրջ ու մտորում վաղվա գրականության համար: Եվ թերևս, այս վերջինը պետք է լինի առաջնային, այսինքն, մենք այսօր մտածենք նաև վաղվա գրականության մասին, նրա դրսևորման ձևի, տեսակի ու էության մասին, և բոլորս մի քիչ պատասխանատվություն վերցնենք, որպես թե այսօրվա և թե վաղվա գրականության կրողներ: Եվ բնավ ցանկալի չէ, որ որևէ մեկը գրեր.

Ես հայրենիքիս անհումուս, անջրդի
ու խոպան հողերը մաղեմ գլխիս
ինձանից ի՞նչ ապագա կերտող... /Նարինե Ավետյան/

Մեր այսօրվա գրականությունը մեր խառնաշփոթ, բարդ, աղավաղված և անբարո կյանքի արտացոլումն է, երևույթ, որ միանգամայն բնական է: Դժվար ու բարդ ժամանակահատված մեզ բաժին ընկավ: Անթիվ հարցականներ միանգամից կախվեցին օդում, որոնց պատասխանների մեր տարբերակները, որպես կանոն, սխալ են դուրս գալիս: Մենք հայտնվեցինք անծանոթ, անհասկանալի տիրույթում, քաղաքական, հոգեբանական, սոցիալական և բարոյական մի համակարգում, որին հարմարվելը ծանր է ու դժվարամարս: Յուրաքանչյուրս մեզ համար փորձում ենք ապրելու մեր բանաձևը գտնել, փորձում ենք գոյապայքարի մեր տարբերակը առաջադրել ու քննարկել: Այս պրոցեսը, այս իրավիճակում, որ մենք ենք, բնական է և մարդկային: Ընդ որում, ընդունելի է ցանկացած տարբերակ, հասկանալի է ցանկացած մղում, եթե միայն դա ազնիվ է և անկեղծ: Այսինքն, եթե չկա կեցվածք և խիստ առանձնահատուկ երևալու հակում:

Փորձենք մի պահ մտածել, թե ինչո՞վ է տարբերվում գրողը սովորական մահկանացուից: Գուցե միայն նրա ապրածն ու զգացածը թղթին հանձնե-

լու կարողությա՞մբ: Յուրաքանչյուր գրքի մեջ մենք նաև մեզ ենք փնտրում: Ընդունենք, թե չընդունենք՝ այդպես է:

Այսօրվա երիտասարդների գրականությունը մտորումների, ընկալումների, դիրքորոշման և արտահայտչաձևերի առումով շատ չի առանձնանում առկա գրականությունից, իսկ ինչ-ինչ կտրվածքներով նաև ազդեցության եզրեր ունի:

Ապրված տողեր կան այս գրքերում, հետաքրքիր մտորումներ, հերոսները հիմնականում մեր ժամանակակիցներն են, նույն հոգսերով ապրող, պրկված նյարդերի նույն համակարգում: Եվ ընդհանրացումները, որ կան այս գրքերում, և որ գրականության արժևորման համար լուրջ փաստարկ են, թերևս անքուն գիշերների, նյարդային լարումի, հասուն տառապանքի արդյունք են: Այո, ճիշտ է Աստղիկ Սիմոնյանը, երբ գրում է. «Հենց որ հոգնում ես, վախը դառնում է անտարբերություն, հույսը՝ ունայնություն, հավատը՝ դատարկություն»: Անկեղծ է Սիրանույշ Գալստյանը, երբ արձանագրում է, որ «Ապրում ենք, անընդհատ տեսնելով բիբլիական մի սար, որը մշտամնա կապտամշուշ տեսիլքի է նման, նույնիսկ երբ արևն ընդգծում է նրա ամեն մի փոսն ու կորությունը»: Ազնիվ ու հասկանալի են Մարիամ Ասրիյանի մտատանջությունները, որ կան յուրաքանչյուրիս մեջ, ինչպե՞ս կկարողանա զավակն «ապրել ամեն օր օրի, ժամ ժամի խեղաթյուրվող բարքերով, այլանդակությունների կծիկ այս աշխարհում: Ինչպե՞ս կապրի իմ զավակը սունկի պես տարածվող մարդ ռոբոտների կողքին...»: Եվ ցավալիորեն ճիշտ է Գոհար Նիկողոսյանը, որ «կյանքը բյուրավոր մագիլներ ունի՝ մեկի ցամաքելով բյուրավոր նորերն են գոյանում»:

Ո՞րն է մտահոգիչը. մեր գերքաղաքականացված ու տխուր իրականության դաջվածքը կա այս գրականության մեջ: Կասենք՝ ճիշտը դա է, գրականությունը արտացոլումը պետք է լինի իրականության... գուցե, բայց շատ տխուր արտացոլումն է սա: Նյարդային լարում կա, չհասկացված լինելու բարդույթ, փնտրտուք, և դրա ճանապարհին պատեպատ խփվելու ցավը: Կյանքի ու իրականության հանդեպ թերահավատությունը, զզվանքը, իրավիճակին չհարմարվելն այնքան ցայտուն է, որ արտահայտվում է անընդմեջ, և մեջբերումներ կարելի է անել անվերջ:

Իհարկե կյանքը շատ ավելի բազմազան է, քան պատկերվում է այս գրականության մեջ, անձնական տվայտանքներն ու հոգու դեգերումներն այստեղ գերիշխում են: Թեմատիկ ընդգրկումների առումով պոեզիան ավելի խոսուն է:

Սակայն այսպես թե այնպես, ցավալիորեն քիչ լուսավոր բան կա այս գրականության մեջ, և դա ինչ-որ տեղ հասկանալի է: Լավատեսությունը հենց այնպես չի լինում, դրա համար հիմքեր են պետք, ընդ որում խիստ որոշակի: Իսկ մեր իրականությունն այդ հիմքը չի տալիս:

Այնուհանդերձ, կան, ըստ իս, անցանկալի էջեր այս գրքերում, որոնց վրա պետք է ուշադրություն հրավիրել, քանի որ այս կամ այն տարբերակով դրանք առկա են շատերի մոտ: Առաջին հերթին պետք է ձերբազատվել կեցվածքից, հնարովի պատկերներից, արհեստական հոգեվիճակների նկարագրությունից, ոչ թե որոշակի հեգեվիճակներից, այլ հնարովի հոգեվիճակների նկարագրությունից, սա է, որ չի համոզում: Այստեղ է, որ հարցադրումը աղավաղվում է, միտքը դառնում խրթին, պատկերը՝ հնարովի, ապրումը՝ արհեստական: Եվ անգամ խիստ մարդկային ապրումներն ու զգացմունքները մարդկային լեզվով գրելու կանոններից շեղվելու պարագայում գրվածքն անմիջապես, մեղմ ասած, ծանձրացնում է, որովհետև խճողված մտքերով ու վատ լեզվով մեկնաբանությունները հիմա բնավ չեն զարմացնում, եթե չասեմ, որ զայրացնում են:

Փիլիսոփայելու հակում կա, որը կարծում եմ, բոլորովին էլ պարտադիր պայման չէ երիտասարդ ստեղծագործողի համար: Բոլորը պարտադիր փիլիսոփայում են ու ընկնում անհարմար վիճակների մեջ, որովհետև շատ հաճախ բացարձակ անհեթեթ մտքեր են արտահայտում և անկապ եզրահանգումներ անում, որոնք ոչ մի առնչություն չունեն իրական կյանքի հետ:

Երբեմն այնպիսի զգացողություն է առաջանում, որ գործ ունես ոչ թե սովորական մարդկանց հետ, այլ ինչ-որ արտառոց էակների, խիստ առանձնահատուկ մտածողությամբ: Ես իհարկե չեմ ժխտում այդպիսի կերպարի գոյությունն առհասարակ, առավել ևս, եթե նա արվեստագետ է, բայց երբ երևույթը ծավալվում է, այսինքն շուրջ բոլորդ արտառոց մտածողության տեր անհատներ են ձևակերպվում, իսկ զարմանահրաշ արտահայտչաձևերն անվերջ են ու անքանակ, մնում է ենթադրել, որ դա պարզապես կեցվածք է, որոշակի սխեմա,

որով էլ սարքվում է՝ իրենց իսկ ոճով՝ «ստիխ»: Եվ շատ հաճախ ստեղծագործությունները պարզապես մտքեր են, որ խմորվել են հոգում, բայց բանաստեղծություն դեռևս չեն դարձել:

Մի զարմանալի ընդհանրություն էլ կա. հիմնականում ասես մի խեղճ ու կրակ մարմին ունեն, որի ձեռքը հիմնավորապես կրակն են ընկած. մեկը՝ քամուն է տալիս, մյուսը՝ շների բերանը, մեկը՝ ծամում ատամների տակ, մյուսը՝ երգեցիկ լողացնում, մեկը՝ առողջ քրտնացնում, մյուսը՝ արնաշաղախ գցում հայելու փշուրների մեջ, և այլն, և նման ապշեցուցիչ ու սադիստական պատկերները շատ են: Հաճախ զարմանալի պատկերավոր են համեմատությունները, ու՞մ հետ ասես իրենց չեն համեմատի, իսկ շան հետ համեմատություններն անհաշիվ են, էլ քոսոտ շուն, էլ սոված շուն, վնգստացող շուն, շան քոթոտ, և այլն:

Այս բազմապիսի թվացող բազմաթիվ ընդհանրությունները բերում են նաև ձեռագրի նմանության, իսկ սա արդեն բնավ էլ ցանկալի երևույթ չէ գրականության համար:

Կարծում եմ, որ մի հետաքրքիր միտք, գտնված մի պատկեր, ոոպեական մտորում, կամ յուրօրինակ թվացող մի համեմատություն դեռևս բանաստեղծություն կամ պատմվածք չէ: Գուցե մտքերը հավաքե՞լ է պետք, իսկ դուրս թափվածը՝ վերանայել ու մշակե՞լ, եթե իհարկե բացահայտ ու անվերապահ տաղանդ չես: Հաճախ գրվածքները պարզապես մտքերի հեղեղի տպավորություն են թողնում, մտքեր, որոնք դասդասված չեն, այլ տպավորական են, զգայական դուրս են թափվել ու մնացել նույն թափթփված ու մինչև վերջ չձևակերպված վիճակում: Շատ հաճախ դժվար է հասկանալ ինչի՞ են գրել կամ ի՞նչ են գրել, բայց չհասկանալը բնավ էլ մտքի բարդությունից կամ խորությունից չէ:

Պետք է ընդունել, որ ինքնահաստատվելու ճանապարհին վատ լեզվով, սխալ կետադրությամբ ու շարադրանքով, արտառոց բառերով զզվանք ու գռեհիկություն շաղ տալը, չպետք է հրամցվի որպես գրականություն, և հետո էլ դեռ քննարկենք՝ լավն է, թե ոչ գրականության այդ տեսակը, կամ ընդունելի է արդյո՞ք: Եվ այս առումով հետաքրքիր է Գևորգ Թումանյանի ձևակերպումը.

Բայց հանուն հայ գրականության

Կարելի էր չէ՞ անկեղծությունդ
որոշ ժամանակով սահմանափակել...

Առհասարակ զարմանալիորեն դաժան է վատը, որ ուժ ունի կուլ տալու եղած լավը: Եթե ճիշտ նայենք իրականությանը նեգատիվ երևույթներն ահավոր են, թե քանակական, թե որակական առումով: Եվ այդ ողջ նեգատիվն ընդգրկված է մեր գրականության մեջ: Բայց օրինակ մեր երեկվա պատմությունը, այն փաստը, որ մի սերունդ ինքնակամ գնաց պատերազմ, կռվեց ու հաղթեց, ուղղակի չկա, ասես չի էլ եղել, բայց չէ՞ որ դա զոհվածների համար ցավն է, հաղթանակի հպարտությունը, մեր պատմության նորածև հիշողությունը, հերոսի անընդմեջ գոյությունը: Էպիզո՞դ էր մեր կյանքում, անցա՞վ անհետ: Այս առումով պետք է առանձնացնեմ Հուսիկ Արայի «Մարդու որդիները» գիրքը, որտեղ այսպիսի տողեր կան.

Գիշերը մեծ էր...
ստիպված, դժվար քայլեցինք չարի հոգնության միջով,
որ...Լույսը տեսնենք:

Այնուհանդերձ, տառացիորեն բոլոր գրքերում կան հաջողված գործեր, գտնված բառեր և պահեր, գեղեցիկ պատկերներ, շատ բնական զգացումներ, և հիարկե, կա ասելիք, որը խիստ էական է: Այսինքն կա բացահայտ շնորհք:

Ես համոզված եմ, որ այս գրքերը մեր «հոգնության միջով» դեպի լույսը տանող մեր դժվար քայլքի յուրատեսակ արձագանքներն են:

---

1. Աստղիկ Սիմոնյան - «Մեկ թագավորի թատրոն»
2. Արմինե Աբրահամյան - «Անկիմյուրի բնակիչները»
3. Արփի Ոսկանյան - «Ծիկ»
4. Գայանե Բաբայան - «Մենապար»
5. Գոհար Նիկողոսյան - «Հրաշքի պահեր»
6. Գևորգ Թումանյան - «Անընդհատ անառակ որդի»
7. Կամիլա - «Ողվտի կինը»
8. Հարութ Կբեյան - «Մայրամուտի գերիները»
9. Հուսիկ Արա - «Մարդու որդիները»
10. Մարիամ Ասրիյան - «Շանթարգել»
11. Ահեր Բեյլերյան - «Վերջին օրը»
12. Նարինե Ավետյան - «Փնթի տողեր»
13. Նուշիկ Միքայելյան - «Քամիներից այն կողմ»
14. Սիրանույշ Գալստյան - «Էջեր ուրիշի օրագրից»
15. Վաչագան Պապոյան - «Մոտեցող երկինք»